Ա. Կ. ԶԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՏՄԱՆ ՇՈՒՐՋ

Քաղաքների անընդհատ ընդլայնումը և նրանց կենտրոնների շարունակ բազմացումը արտացոլում են մարդկային հասարակության փոփոխվող, շարունակ աճող ընթացքը։ Այդ երևույթն արմատախիլ է անում քաղաքները սահմանափակող դաշտավայր-բնակավայր մինչ օրս վավերականություն ունեցող երկբաղադրիչը։ Ուզենալ քաղաքների զարգացման ընթացքը սանձահարել միշտ նոր «պատնեշներ» կառուցելով կամ բաժանել թաղամասերը դասակարգային տարբերություններով, նշանակում է հակադրվել այժմյան կյանքի իրադրությունների իսկական բնույթին։

Այս պարագայում, արդեն, մեծ խնդիրներ են ծառանում ժամանակակից ճարտարապետի առջև։

Հիշենք, ապա, պատմությունը։

Եթե անցյալում, օրինակ, տաճարը կերպընկալված էր շինականի տան նախատիպով, ապա նրա հետագա զարգացումն ընթացավ տրված թեմայի տարածական-երկրաչափական հասկացողության, աշխարհայեցողության զարգացմամբ։ Նման եղանակով կառուցվեցին պալատները, կաթողիկեները, վերածննդի դարաշրջանի հրապարակները։ Իսկ ժողովուրդը շարունակում էր բնազդաբար ծավալել-կազմավորել իր բնակավայրը և սա ժողովրդի կողմից քաղաքաշինարարներին թողած ժառանգությունն էր։

Դա ինքնին, մի սկզբունք էր, որը ներգրավում էր ճարտարապետական հորինվածքը և կազմում՝ շենքերից և ազատ տարածություններից շարադրված մի միասնություն։ Հետագայում պարզվեց, սակայն, որ անընդհատ ընդլայնվող մեծածավալ, բջիջակազմ քաղաքաշինարարական հորինվածքին թերևս կարող է զոհ դնալ ծավալով ավելի համեստ, բայց զեղատեսիլ ճարտարապետական շարադրանքը։

Քաղաքաշինության հետագա էվոլյուցիայի համար դա, իր հերթին, թելադրեց նոր խնդիրներ։ Ըստ որում, այդ խնդիրները վճռելիս պետք էր ելնել այսօրվա կյանքի արագ փոփոխականությունից և դարի անհանդիստ ոգու պահանջներից՝ մտածելով, նաև, մարդկային կենցաղի հարմարավետության մասին։

Այդ պատճառով ճարտարապետական ձևին քաղաքաշինարարները վերագրում են քաղաքայնացումը տարածելու իմաստ և քաղաքների ամբողջական կազմին ենթակա երևույթ։ Հետևաբար կիրթ ձևին հաջորդելու են բազմապատկման, համադրման հնարավորություններով օժտված բաղադրիչները։ Ամբողջ հորինվածքով նշանաբանված ձևին փոխարինում է միավոր ծավալը, հանրային իմաստով ասված՝ բջիջը, այսինքն կյանքի զորությունը պարփակող միավոր կազմվածքը։ Համապատասխանաբար, ճարտարապետական ձևակերտման եղանակը փակ ձևից վերածվեց բաց ձևի: *Քաղաքների կազմա-*

վորումը այժմ իրագործվում է աճող մարմնի եղանակով՝ որպես շարունակ զարգացող անսահմանափակ մի շարադրանք։ Միավոր ծավալների հաջորդականությամբ մարմին է առնում ընդհանուր հորինվածքը, իսկ հորինվածքի հիմնական տարրերը լինում են՝ բջիջը և կառույցը։

Ծավալներով տեղադրված, հանրային բնույթ կրող սրահները, հարթ մակերեսները ոչ միայն խմբավորման վայրեր են, այլև նշանակալից են մարդկանց միջև առաջացող հաղորդակցությունների միջոցով։ Արդի քաղաքաշինարարության բարձրագույն նպատակը մարդը մարդուն մոտեցնելն է։ Ուստի ներքին փողոցը վերածվում է հանրային կյանքի ամենաջերմ կենտրոնի. վերացվում է փողոցի և տների միջև գոյություն ունեցող պատնեշը, «կարմիր գիծը» այլևս սահմանում է փողոցի սիրելի լայնությունը և ոչ թե շենքերի տեղադրումը կամ մակերեսների ընդլայնումները։ Տարածությունները, ծավալները ներթափանցվելով իրար են շաղկապվում։ Հանրային կյանքը հարստացնում և գունավորում է անհատի առանձնությունը. առօրյան վերածվում է ակտիվ փոխհարաբերությունների կապը։

Ըստ այդմ, գոյություն ունեն քաղաքներ ձևակերպելու տարբեր առաջարկներ։

Իտալիայում Լեոնարդո Ռիչչին (Ֆիրենցի) ունի իր յուրահատուկ տեսակետը։ Ռիչչիի համար գանգվածների համակարգը ճկուն է և պարփակված բնակելի տարածություններն իրենց սարքավորումներով երկարում և միանում են ընդհանուր սպասարկումներին։ Անհատական կյանքը բնորոշվում է բնակելի կյանքով, հետևաբար «քաղաքային կենտրոնը» խմբավորումների կենտրոն է, և պլանավորումը պետք է արտահայտի այս իրողությունը[1]։ Իտալացի որոշ ճարտարապետների հայեցողությամբ, առհասարակ, պլաստիկ արտահայտչականության միջոցով շեշտվում է ձևակերպված գանգվածների պարունակության պատկերավորումը։ Շարադրանքը չի սահմանափակվում խորանարդների բաղադրումների անհամար հնարավորությունների շուրջ, այլ, ի նկատի ունենալով այդ հնարավորությունները, փորձում է ամբողջին տալ ոչ միայն ծավալային կերպար, այլ հատկապես պլաստիկ ձևակերտում, այսինքն բնակելիների ձևակերտված խմբավորումը։ Այս մոտեցումը նշանակում է ենթակառույցի և միավոր ծավալների միաձուլում։ Դժվար չէ նկատել, որ այստեղ աճումը բնթանում է բջիջից բազմավորման «կենսաբանական» օրենքներով։

Կա նաև բջիջների զարգացման սկզբունքի հակառակ դիրքորոշումը։ Ճարտարապետ Ա. Նոյմանի առաջարկում տարածությունը հորիզոնական և երեմն ալիքավոր ուրվագծերի միջոցով բաժանվում է երևակայական շերտերի և, հարկերի նման, ամեն մի շերտը կրում է բնակելի տարածության միավորը և զարգանում է բազմապատկվելիք միավորների տարբեր հնարավորություններով։ Իդեալական ցանցը բնակելի միավորները կազմակերպելու կաղապարն է և միաժամանակ կրող համակարգը։ Կարող է տարբեր բարձրություններով անսահմանորեն երկարել, ուղղությունը փոխել, խտանալ։ Կառուցվածքների շարադրանքը ընկալվում է տարածությունը բաժանող ցանցերի կերպարներով և ձևակերտվում «հորիզոնական ծավալներից» հարադրական աճումով, կամ ժակազրված ծավալների համակարգով։ Կառույցը սյուներից և հեծաններից

[1] L'Architecture d'Aujourd'hui, 1966, № 128.

չի կազմված, այլ հորիզոնական և ուղղահայաց պատ-հարթակներից։ Առաջարկված շինանյութերը՝ երկաթբետոն, ապակեպլաստմասսա։ Այսպիսի կառուցվածքներում պարփակիչ ընդհանուր ծավալը, ինչպես և ամենափոքր բաղադրիչները կաղապարված են կազմավորման նման կանոններով, հետևաբար բնակարանները շաղկապված են բնակարաններին, սենյակները սենյակներին, կահույքը՝ կահույքին։ Շենքը գործարանային արտադրանք է. բանվորը պետք է հավաքի տարբեր մասերը, տեղադրի, զոդի և այլն։ Շինարար բանվորը դառնում է մեխանիկ բանվոր։ Բնակարանները պատրաստվում են այնպես, ինչպես, օրինակ, սառնարանները։

Վերջերս անգլիացի ճարտ. Պ. Սմիթսոնը ասել է հետևյալը. «Անցյալում և այսօրվա ունեցած մեր գիրքերի տարբերությունը հետևյալն է՝ մենք շենքը այլևս տեսնում ենք որպես ամբողջության մի հատվածը և ոչ թե որպես կզրկացած երևույթ, նման մի պոեմի, որ կարելի է կարդալ և իր ամբողջությամբ մեր հիշողության մեջ պահել։ Ջրիջներով բնակելի զանգվածներ կազմել, ցանցերում բնակելի միավորներ տեղադրել, տարածությունը շերտերի բաժանել և բնակարաններով ամբողջացնել՝ երեք տեսակետներ են սրանք, որ առաջացել են բաց ձևի հասկացողությունից և ուր հորինվածքը ճկուն է, կառույցները շարունակ աճելու և փոփոխվելու տեխնիկական հնարավորություն ունեն։

1964-ին ճապոնացի երկու երիտասարդ ճարտարապետներ (Ֆ. Մարի և Մ. Օտաքա) առաջարկեցին միասնական կառույցի գաղափարը, որը պետք է ընդգրկի ու պարփակի ամբողջ քաղաքը։ Այս նպատակին հասնելու համար առաջարկվեց Կենցո Տանգե-ի մեգա-կառույցը (mega-struttura) կամ մեգաձևը (mega-forma)։ Մեգակառույցը ցանց է, որը շաղկապում է քաղաքային այլ ցանցերի ամբողջ շարքը։ Ավելի փոքր ցանցերը կրում են հանրային բնույթ՝ վաճառք, արդյունաբերություն, տարբեր սպասարկումներ, երթևեկություն։

Դա նշանակում է ծրագրեր կազմել, իսկ ծրագրեր կազմելը դժվար է, որովհետև դժվար է բնորոշել մարդու մոտ առաջացող նոր պահանջները, նախատեսել կյանքի ընթացքի ուղղությունը։ Ինչքան էլ հետաքրքիր լինեն ճապոնացի երկու ճարտարապետների մոտեցումները և առաջարկած դասավորումները, այնուամենայնիվ հիմնականը, ինչպես իտալացի ճարտարապետները շարունակ պնդում են, մարդկային եղելությունների մեթոդիկ ուսումնասիրությունն է։ «Նոր ծավալականությունը» երևույթների զգայնություն չէ միայն, այլ պիտի հիմնավորվի տարբեր ավյանների իրական և ամբողջական պատկերացումներով։ Պիտի գտնել մարդու պահանջների և քաղաքային ֆունկցիաների փոխհարաբերությունները, նշում է Լ. Սավիոլին, իսկ Կ. Ջ. Արգանը ասում է. «Այսօրվա մեր նախագծերը կազմավորման (infieri) մեջ գտնվող արվեստի գործեր են»[1]։ Ըստ նրանց, պիտի ուշադիր լինել երևույթների իրական պատկերացմանը և ազատագրվել նախապաշարումներից։ Ի դեպ, եղելությունների մեթոդիկ ուսումնասիրությունը և նոր ձևերի անընդհատ մշակումը ճարտարապետին պիտի մղեն գտնելու քաղաքների նոր կեր-

[1] C. G. Argan, Proyette e Deotino. Milano, 1965.

պարը։ Այդպիսին է, ահա, իտալական արդի ճարտարապետության ընդհանուր տեսական միտումը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, իտալական կառավարությունը, նպատակ ունենալով նպաստել պատմական մեծ նշանակություն ունեցող քաղաքների քանդված շրջանների վերակառուցմանը, բացառիկ հրովարտակ արձակեց՝ նոր պայմաններ և միջոցներ ընձեռելով։ Մրցանակարաշխությունների կարգով ընտրվեցին լավագույն նախագծերը։ Վերակառուցումը պաշտոնական անհատների կամ մասնագետների նեղ շրջանների մտահոգությունը չէր միայն, այլ ամբողջ ժողովրդի պահանջը։ Առաջին վերակառուցումներից մեկը եղավ Ֆիրենցեի Պոնտե Վեկկիոն։ Ողջ շրջանը արժեքավորվեց քաղաքաշինարարական հին ծրագրի հիման վրա, և դա եղավ առաջին սխալը։ Նոր շինությունների ստեղծման հետևանքով թաղամասում ծանրաբեռնվեց երթևեկությունը։ Քաղաքի պահպանված ճարտարապետական հին կազմը անբավարար գտնվեց նոր հաստատությունները կրելու համար։

Երկրորդ սխալը գալիս էր այդ պատմական թաղամասերի շուտափույթ վերակառուցումը իրագործելու անհամբերությունից։ Պետք էր հիմնվել քաղաքի ընդհանուր պլանի վրա, իսկ պլանը կազմվեց շատ ավելի ուշ։ (Նույնը պատահեց Տորինոյի, Վենետիկի և այլ քաղաքների հետ)։ Չէ՞ որ ընդհանուր պլանի իրագործումը կախում ունի տվյալների ամբողջական կերպընկալումից և «նոր ծավալականության» զգայնությունից։ Գործնականորեն, մասնակի շրջանների նախագծով սահմանափակվելիս պիտի ճշգրիտ և հարակից մնալ ընդհանուր պլանի բնույթին։ Բայց այստեղ առաջանում է առաջին դժվարությունը՝ հարկավոր է գտնել այն ենթակառույցը, որը իրար է շաղկապելու անցյալի և այսօրվա ձևերը։ Մարդն այսօր լքում է քաղաքի պատմական կենտրոնը և ավելի հեռվում կառուցում իր բնակավայրը, ուր նոր ապրելակերպի համար ներդաշնակ կենտրոններ կազմակերպելու հնարավորություն կա։ Նույն այդ մարդը, մյուս կողմից, ամբողջ կուլտուրայով և հոգևոր արժեքների հարակցությամբ կապված է իր երկրի անցյալին։ Ուրեմն՝ հակասական դիրքորոշումներ, որոնց պատասխանը պիտի տան բաղաքաշինարարները՝ անցյալն ու ներկան կապելու և նորը կերտելու հանդգնությամբ։ Եվ իտալական ճարտարապետները եկան հետևյալ եզրակացության։ Քաղաքների ապագա զարգացումը չպիտի շարադրել որպես շենքերի միջանկյալ և կղզիացած դեպքերի շարք, ոչ էլ իրրև մի քանի տիպերի կարգավորված շարան։ Պիտի նախատեսել առաջանալիք հարաբերությունները կազմակերպող բարդ համակարգեր, որոնց միջոցով ծավալվելու են և վերադարձարար հանգելու են բնակավայրերի միակցությունները։ Իրար են շաղկապվելու սպասարկումների ուղիները, բաշխման կետերը, բազմաբնույթ երթևեկության ցանցերը շենքերը, գրոսնելու, ժամանցների վայրերը։ Մշակվելու են քաղաքային մեծ և բարդ համակարգեր, որոնց միջոցով կարելի լինի կազմակերպել կյանքի նոր ձևեր։ Այդ ձևերը ամփոփելու են ոչ միայն ծանոթ տվյալները, այլ համակարգերի ընդարձակման իսկ պատճառով նպաստելու են կյանքի բնաշրջմանը։ Եվ իտալացիների փորձը ցույց է տալիս, որ այսպիսի մոտեցում կարելի է իրագործել մերձքաղաքային ազատ տարածություններում, ինչպես օրինակ՝ Հռոմից ոչ հեռու կառուցվելիք հետևյալ կենտրոններում՝ Տրե Ֆոնտանե (ճարտ. Վակկարո, Ֆիորենտինո, Դարգանո, Պերուջինի և Վալլե, 1965), Տոր դե Դրեչի

(ճարտ. Լ. Անվերսա, Ֆիորենտինո, 1965) և Սպինաչետո (ճարտ. Պ. Մորոնի, Ն. դի Կանյո, Դև, Ֆիորենտինո, Ֆ. Բատտիմելլի, Լ. Բարբերա)։

Սակայն ճարտարապետների ամենամեծ մտահոգությունը եղավ ոչ այնքան նոր ավանների կառուցումը, որքան հին քաղաքներում նոր կենտրոններ տեղադրելը, և այս իմաստով ուշագրավ է 1963-ին Տորինոյի համար նախատեսված «դեկավարման կենտրոնը» (ճարտ. Կ. և Մ. Այմոնինո, Ֆ. Բոտտիմելլի, Ֆ. Բերլանդա, Բ. դե Ռոսսի, Էսպան և Ջ. Մոսկոն)։ Այս կենտրոնը տեղադրված է քաղաքի հին ցանցի և շոշափող ճեպընթաց ճանապարհի միջև։ Հնի և նորի անցումը չի կատարվում գոյություն ունեցող ցանցի սոսկական ընդլայնմամբ։ Նոր հաստատության գործունեությունները կազմակերպված են մեկը շրջանակաձև, իսկ մյուսը՝ երկարաձիգ երկու խտացման կենտրոններում։ Առաջարկված ծավալային լուծումը ճեպընթաց ճանապարհի նոր մասշտաբը ներդաշնակում է քաղաքի նոր կազմին։ Համակարգ այս դիրքորոշումը բնորոշում է դեկավարման կենտրոնի ճարտարապետական շարադրանքը։

Այս տիպի կենտրոնների կազմավորմամբ առաջանում են ուժերի նոր գծեր, ձգողության նոր բևեռներ։ Նախագծումը կատարվում է համամասնությունների պատկերումով, այսինքն՝ «պատկերված պլան»-ի (piano quadro) միջոցով։ Սա ընդհանուր պլանում նախատեսված կանոնավորությունների ձևակերտված մեկնաբանությունն է և ընդգրկում է քաղաքի ամբողջ երկրամասը։ Այսպիսի սկզբունքներով բնորոշվում են բնապատկերի կազմը, ծավալները և քաղաքի ընդհանուր կերպարը։ Անցյալը իմաստավորվում և մեկնաբանվում է նոր հասկացողությամբ, միջոցներ են ստեղծվում ապագա զարգացման համար, բայց ոչ ոճական իմաստով, այլ համաչափությունների և ենթակառույցների գործածությամբ։ Հետևաբար պատկերված պլանը ամբողջացնում է քաղաքի ընդհանուր պլանը և վերականգնում քաղաքի մակերևույթի հարցը։

Այդպիսով, ըստ իտալական ճարտարապետների, կյանքի շարունակ փոփոխվող տվյալներից առաջացած հոսանքները չենք կարող կանգնեցնել քաղաքաշինարարական սկզբունքների պատնեշներով, ուրեմն պիտի կազմակերպել առընթերաչափերի միջոցով։ Քաղաքների կազմավորման հարցը միշտ բաց է և իտալական օրենսդրությունը բավական ճկուն է և ընդառաջում է կառուցողական նոր առաջարկներին։ Քաղաքի ընդհանուր պլանը հիմք է, բայց ոչ թե վերջնական լուծում։ Այն շարունակ կազմավորման պրոցեսում գտնվող ծրագիր է։ Իմաստ է և ոչ թե սահմանում։ Դա շարունակ պլանավորելու հնարավորություն է տալիս ճարտարապետին։

Դարերի ընթացքում ստեղծված արվեստի գործերը մշակույթը լուսավորող կենտրոններ են և պիտի նոր խնդիրներ լուծելիս պահել նրանց արժեքը։

1964-ին Վենետիկի քաղաքապետարանը հայտարարեց համաշխարհային մրցանակաբաշխություն՝ կայարանամերձ Տրոնկետտո արհեստական կղզին բարեկարգելու նպատակով։ Նախատեսվում էին՝ նավերի մոտեցում, նավամատույցի հարմարանքներ, մերձնաների մեծ կանգառներ, հյուրանոցներ, պահեստներ։ Հանձնաժողովը ընտրեց հինգ հավասար (ex eaquo) առաջին մրցանակներ և մի երկրորդ մրցանակ։ Առաջարկվեցին հետևյալ լուծումները։

Ճարտարապետներ Ի. Ռապպաին, Ա. Ֆուկարին, Պ. Մայնարտիսը հերքում են քաղաքաշինարարների այն տեսակետը, ըստ որի Լագունան պիտի նկատել որպես «կառուցելու մակերես» (այսինքն քաղաքը ընդլայնելու հնա-

բավորություն), հաստատելով, որ Լագունան, ո՛չ ծով է, ո՛չ էլ հողամաս, այլ «կյանք ունեցող երկրամաս» և «բաղում հնարավորություններ ունեցող տարածություն»։ Դիտավորյալ մեջբերում ենք երկրամասին տրված մեկնաբանությունը, որովհետև տեղանքի հասկացողությունը գիրքորոշում է նախագծողի հայեցողությունը և բնորոշում՝ ճարտարապետական ձևավորման ապագա կապմը։ Ջրի մակերևույթն այնքան իրական է, որքան հողամասը և ամբողջ Վենետիկը կառուցված է այդ երկու տարրերը իրար հյուսելով՝ որպես մարդաշխարհագրական հսկա և եզակի երևույթ, ուր բնություն-մարդ պայքարը առօրյա իրողություն է։ Պայքար է դա, որ մղվում է ոչ միայն քաղաքի պահպանման համար, այլ ճարտարապետական նոր արժեքներ ստեղծելու նպատակով։ Հեղինակները առաջարկում են հիմնական սպասարկումների շենքին մշտական կապմ տալ դեպի ջուրը երկարող մի հսկա թևի կառուցմամբ, իսկ նավերի մոտեցումները ապահովել ջրի երեսը ծածանող երկաթ-բետոնե հարթակներով։ Հարթակների շարժականությամբ մեկնաբանվում է ջրի կատարած դերը։ Մոտեցման ճանապարհները ջրից պահպանող կողերով հենվելու են հողին (որը ջրի մակերևույթից մեկ մետր ցածր է) և տեղադրվելու են բնական ջրանցքների ուղղությամբ։ Ճարտարապետական կապմը միավորվելու է և ոչ թե հակադրվելու բնության կապմին։ Այս կապակցությամբ հեղինակները նշում են՝ «Վենետիկյան հարցերի բարդ կապմը այնպիսին է, որ միայն անծանոթ ձևերը, արմատական գյուտերը կարող են դրանց լուծում տալ»։ Եվ իսկապես, անծանոթ ձևեր, գյուտեր, տեղագրության իրողություն, մակերևույթաթարանական կապմվածք, կառուցվելիք կղզու փոխհարաբերությունները ապահովող երթևեկության ուղիներ և Լագունայի հոսանքները՝ նախագիծն իրագործված է այս տվյալների և մարդու պահանջների համակապմ շարադրանքով։

Երկու այլ նախագծերում (լեհեր և հարավսլավներ) կղզին նկատվում է «որպես գոյություն ունեցող իրականություն» և, ինչպես ճարտ. Վ. Օստրովսկին է նշում, «որոշ ճարտարապետներ նախագծեր են կապմել ենթադրելով, թե իբր կղզին գոյություն չունի և կամ տարածությունը առաձգական է»։

Տրոնկետտոն գեռ ամբողջապես ցամաքած կղզի չէ՝ ավելի ջուր, քան հող և հողը գտնվում է մոտ մի մետր խորության վրա։ Անկյունաձև կարճ մասը սրածայր վերջավորությամբ մտնում է Վենետիկի երկաթուղու կամուրջին կից ծոցը, մյուս թևը շատ ավելի երկար, բառանկյունի կապմով, գուգահեռ է նավամատույցին։ Վ. Օստրովսկու, Է. Ռավնիկարի, Ջ. Մանֆրեդիի նախագծերում կղզին ընդունվում է որպես գոյություն ունեցող կապմակերպվելիք հենարան։

Ճարտ. Ռ. Մանստրոյի առաջարկը բոլորովին տարբեր է՝ «բանի որ պիտի պահպանել կղզին,—ասում է նա,—լավագույն միտքը Կանալ Գրանդեի երկայնքին գտնվող պալատների կապմած պատը շարունակելն է» և նա ներկայացնում է դեպի Լագունան հովհարի նմանությամբ բացվող և Կանալ Գրանդեի ընթացքը շարունակող շենք-ճանապարհ-կամուրջ միակապմ հորինվածք։ Բոլոր սարքավորումներն ընդգրկող, քաղաքաշինարարորեն Վենետիկի կապմը շարունակող, ջուրը, հողը և շենքերը միակերտող ճարտարապետություն է դա։ Մշակել գուտ ֆունկցիոնալ տվյալներ շատ միակողմանի հայեցողություն է, և պիտի խորամուխ լինել քաղաքի կապմի, բնապատկերի, տեղանքի տարրերի մեջ, արտապատկերել երկրի բնույթը և ներգործող ուժերի

ներմիությամբ՝ վերակազմել կզգին։ Քաղաքը շարունակ կազմավորման պրոցեսում գտնվող հորինվածք է, ու պիտի կարողանալ հաջող կերպով ներդնել նորաստեղծ ձևը։ Աշխարհագրական իրողությունը իմաստավորվում է, ճարտարապետական ձևակերտմամբ և իրար է շաղկապում Վենետիկի հորինվածքը և նորակերտ կզգին։

Հարցերի մեթոդիկ ուսումնասիրությունը որպես մտածելակերպ հակադրվում է ենթագիտակցական հայեցողության։ Բայց առանց ժխտելու առաջինի անհրաժեշտությունը, պարզ է, որ ճարտարապետական ձևը բխում է նույն հարցերի խորքից։ Դիրքորոշման խնդիր է, կամ ավելի ճիշտ՝ արվեստագետ լինելու ունակության։ Տորկատտո կզգու մրցանակաբաշխության լավագույն նախագիծը ճարտ. Մանստրոյինն է, և, ինչպես բացատրում է հեղինակը, այդ նախագիծը «կազմվեց ձևի ներգիտակցությամբ»[3]։ Այսպիսի հասկացողություն ունեցող ճարտարապետի համար ձևի ընկալումը կապված է ծավալայնության հասկացողության հետ։ Ինչպես բացատրում է Կ. Ջ. Արգանը, «արվեստի արդի գիտակցությունը ձգտում է, իրար միացնել այդ երկու բառերի իմաստը»։ Բնորոշելով և իմաստավորելով տարածությունը, մարդը ձգտում է սահմանել իր հայեցողության և փորձի եզրագիծը։ Պատկերել տարածությունը, նշանակում է մասնակից դառնալ իրականությանը և գործոն լինել ձևակերտվող շրջապատում։ Կարևոր է, որ մարդը զգա ապրած միջավայրը, ընկալի կերտվող ձևը, կառուցվածքների ամբողջ կազմը, «քաղաք-երևույթի» ամբողջական կերպարը։ Այստեղ է, արդի ճարտարապետության բերած նոր խոսքը, Վան դե Վելդեի «բարոյական զիրքորոշումը», Ա. Լոսի «անեղծ ձևերը» նախագծելու հանդգնությունը։ Քաղաքների կերպարները տրված իրողություններ են և նրանց կազմում կատարվող հեղաշրջումներն ավելի դանդաղ են ընթանում, քան մեր ապրելակերպի բնաշրջումը և ընդհանրապես անհամապատասխան են արդի կյանքին։ Նույն միջավայրի հետ մեր ունեցած փոխհարաբերությունները արագորեն փոխվում են, չափանիշը շարժական իմաստ է ստանում և այս իմաստով ծավալականությունը միշտ ավելի է բնորոշում ստեղծվող ձևը։ Ձևը միշտ ավելի մասնակից է դառնում կյանքի ընթացքին՝ «քաղաք երևույթը» շարժականության միջոցով իրագործվում է, որպես շարունակ ձևակերպվող իրողություն։

Իրրև ընդհանուր եզակետ, իսկական ճարտարապետությունը հաստատում է՝ քաղաքն իր ամբողջ հորինվածքով մնում է գետնին հառած, պահպանելով ընդլայնվելու հնարավորությունը. մարդ-բնություն կապը, դարեր տևող այս հաղթահարված կարևոր փոխհարաբերությունը, պահպանվում է. երկիրը և քաղաքը չեն բաժանվում, այլ միմյանց մեջ են ներթափանցում խաչման բևեռների միջև հաստատված կապակցություններով. քաղաքայնացումը գոնում է գեպի ամբողջ երկիրը տարածվելու հնարավորությունը և այստեղ մարդը երևույթները հաղթահարող, տվյալները մշակող, ներգործող էակն է։

Տեղյակ լինելով քաղաքում և երկրում աճող երևույթներին, շարունակ ուշադիր մնալով արդի մարդու կուլտուրական հասկացողությանը, կյանքի պահանջներին, քաղաքաշինարարը նախագծում է այն «նոր ծավալայնությունը», որ ի մի է բերում երկրի և քաղաքների կազմը։

[3] L'Architettura. 1965, № 111.

Ճարտարապետական նոր ձևը մարդու կողմից վերամշակված բոլոր տվյալների դեղագիտական արտահայտությունն է, որ ներընդգրկելու է ժողովրդի բնագդական ստեղծագործությունը, քաղաքների կազմում հերթակ կյանքի ընաշրջմանը, հարազատ ենթակառույցների համակարգը, կիրթ ճարտարապետությունից ժառանգված տվյալները։

Նորակերտ քաղաքների ձևակերպումն ընթանում է տարածությունը կազմավորելու նոր աշխարհայեցողությամբ ու մեր դարաշրջանի վկայումը, մտախոհության արտահայտումը, մարդու չափանիշով վերակերտված աշխարհի պատկերումը ներընդգրկող ճարտարապետական ձևաստեղծումներով։